Արձանագրություն N 2

ՀԴ186-ՊԸԱՇՁԲ-16.1 ծածկագրով պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

30 օգոստոսի 2016 թ.
ժամը 11:00

Մասնակցում էին հանձնաժողովի անդամներ՝ Մ. Հուսեփյանը, Լ. Սարդարյանը, քարտուղար՝ Վ.Նավասարդյանը և հայտ ներկայցրած «ՍԱԲՐԻ» ՍՊԸ-ի, «Բիդեք» ՍՊԸ-ի, «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի, «ՍՄԱԼԱ» ՍՊԸ-ի, «Սասունասար» ՍՊԸ-ի և «ՁԱՏԵԳ» ՍՊԸ-ի լիազոր ներկայացուցիչները:
Բացակայում էր հանձնաժողովի նախագահ՝ Մ. Քոչարյանը:

Օրակարգ
Հայտերի բացման մասին

ՀԴ186-ՊԸԱՇՁԲ-16.1 ծածկագրով պարզեցված ընթացակարգի հանձնաժողովը նախագահող Մ. Հուսեփյանը նիստը հայտարարեց բացված և տեղեկացրեց, որ հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին հայտ են ներկայացրել ներքոհիշյալ մասնակիցները

Մասնակցի անվանումը և գտնվելու վայրը					
«ՍԱԲՐԻ» ՍՊԸ ՀՀ, Արարատի մարզ գյուղ Այնթափ	«Բիդեք» ՍՊԸ ՀՀ, ք. Երևան, Նեկրասովի 86	«Վահրադյան Շին» ՍՊԸ ՀՀ, ք. Ստեփանավան, Չարենցի 175	«ՍՄԱԼԱ» ՍՊԸ ՀՀ, ք. Երևան, Ռուբինյանց 16/1,բն.20	«Սասունասար» ՍՊԸ ՀՀ, ք. Երևան, Ազատության նրբանցք 4-շենք,75-բնակաան	«ՁԱՏԵԳ» ՍՊԸ ՀՀ, ք. Երևան, Նար-Դոս 1շ., բն.31
ԱԱՀ վճարող չի	ԱԱՀ վճարող	ԱԱՀ վճարող	ԱԱՀ վճարող	ԱԱՀ վճարող	ԱԱՀ վճարող
գնային առաջարկը /ՀՀ դրամ, առանց ԱԱՀ/					
2530000	2811660	2543010	2089982	4235000	2250000

Հանձնաժողովը ուսումնասիրեց և արձանագրեց ,որ՝

- հայտ պարունակող ծրարները կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան.
- հայտերում /բացառությամբ «ՍԱԲՐԻ» ՍՊԸ-ի և «Սասունասար» ՍՊԸ-ի/ առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, որոնք կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

«ՍԱԲՐԻ» ՍՊԸ-ի և «Սասունասար» ՍՊԸ-ի հայտերում բացակայում են հրավերով պահանջվող էներգետիկ և Հիդրոտեխնիկական լիցենզիաները: «ՍԱԲՐԻ» ՍՊԸ-ի հայտում Հավելված 3.3 և Հավելված 3.6 լրացված են հրավերով սահմանված պահանջներին անհամապատասխան, մասնավորապես բացակայում են մասնակցի ստանձնած պարտավորությունները հրավերով սահմանված կարգով ներկայացնելու հայտարարությունները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը պարբերությունները:

Հանձնաժողովը քննարկեց և որոշեց՝

- նիստը կասեցնել:
- «ՍԱԲՐԻ» ՍՊԸ-ին և «Սասունասար» ՍՊԸ-ին ծանուցել և առաջարկել մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:
- նիստը վերսկսել 2016թ. սեպտեմբերի 01-ին ժամը 10:00-ին, ք. Երևան, Նոր Նորքի 8-րդ զանգված Մինսկի 95 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 2, դեմ 0:

Հանձնաժողովի

անդամներ _____ Մ. Հուսեփյան

_____ Լ.Սարդարյան

քարտուղար _____ Վ.Նավասարդյան